

ՈՒՐԱՐՏՈՒԻ ԱՆՎԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈՍՈՊՈԳՐԱՖԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

Ուրարտուի անձնանվանաբանությանը վերաբերող որևէ աշխատություն գոյություն չունի: Ներկայացվող ընդարձակ ուսումնասիրությունն առաջին փորձն է մեկտեղելու ուրարտական, նորասորեստանյան, նոր և ուշբաբելոնյան, ինչպես նաև աքեմենյան շրջանի արքայական արձանագրություններից մինչ օրս հայտնի Ուրարտուի և Հայկական լեռնաշխարհի այլ երկրների բնակիչների անվանաբանական և կենսագրական ողջ տեղեկատվությունը: Ուսումնասիրությունը ներառում է անձնանունների ընդարձակ ցանկ՝ շուրջ երեք հարյուր անուն, որոնք ներկայացված են հինգ հավելվածներով՝ «Ուրարտական թագավորության գրավոր աղբյուրներում վկայված անձնանուններ», «Ուրարտական տեքստերում վկայված ոչ-վստահելի և վիճելի անուններ», «Ոչ-ուրարտական աղբյուրներում ներկայացված ուրարտական անձնանուններ», «Դիցակիր անուններ», «Արևելյան Տավրոս»: Անձնանունների մեծ մասը ներկայացնում է Հայկական լեռնաշխարհի բնակչությանը, մնացածը Ասորեստանի բնակիչներ են, ովքեր նորասորեստանյան սկզբնաղբյուրներում հանդես են գալիս իբրև «ուրարտացի» կամ որոնց անուններն ինչ-որ կերպ կապված են ուրարտական լեզվաշխարհի հետ:

Ուսումնասիրության հիմնական նպատակը քննարկվող անձնանունների ստուգաբանությունն է: Ուրարտերենի լեզվական տվյալները սահմանափակ են, իսկ վկայված բառերի մի մասը հանդիսանում են *hapax legomena*: Միևնույն ժամանակ, նրան ազգակից խոռիերենի բառապաշարը և Ք.ա. 3-րդ հազ-ից սկսած, բայց հատկապես Ք.ա. 2-րդ հազ-ի երկրորդ կեսին վկայված մեծաթիվ խոռիական անձնանունները, ինչպես նաև տարածաշրջանի հին խոսակցական լեզուների, նախևառաջ՝ աքքադերենի (ասսուրերենի) և արամեերենի հիման վրա արված ստուգաբանությունները, ինչպես նաև բուն լեռնաշխարհի ներսում վստահաբար խոսված հայերենն ու հնդ-եվրոպական այլ լեզուները (լուվիերեն, հնարավոր է՝ նաև փոյուգերեն և թրակերեն), թույլ են տալիս որոշակիորեն ուրվագծելու Հայկական լեռնաշխարհի էթնո-լեզվական պատկերը Ք.ա. 1-ին հազ-ի առաջին կեսին: Քննարկված նյութի ճնշող մեծամասնությունը վերաբերում է Հայկական լեռնաշխարհում ուրարտական թագավորության գերիշխանության դարաշրջանին (Ք.ա. 9-7-րդ դդ.):

Ըստ այդմ, ուրարտական աղբյուրներում վկայված անձնանունների 33.05 տոկոսը ստուգաբանվում է ուրարտերեն (խոռի-ուրարտերեն) լեզվահիմքով (39 անուն 118-ից, ոչ հստակ ընթերցվող և վիճելի անունները հաշվարկված չեն): Անատոլիական ծագման անունները, ներառյալ՝ լուվիական երկրների արքաների անունները, կազմում են շուրջ 11.01 տոկոս (13 անուն): Հայկական (9) և իրանական (5) անունները կազմում են համապատասխանաբար 7.63 և մոտ 4.24, բալկանյան ծագման անունները՝ 3.39 տոկոս (4 անուն): Հնդ-եվրոպական անունների քանակը, այսպիսով, հասնում է 26.27 տոկոսի (31 անուն): Սեմական անունների թիվը հասնում է 10-ի՝ կազմելով շուրջ 8.48 տոկոս: Եվ վերջապես 38 անունների ծագումը դեռևս

մնում է անհայտ (32.2 տոկոս): Պատկերը գրեթե նույնն է, երբ հաշվի ենք առնում ոչ թե անունները, այլ այդ անունները կրող անձանց քանակը:

Նորասորեստանյան աղբյուրներում վկայված Ուրարտուի բնակիչների շարքում (արքայական անունները և էթնիկական հիմքով կազմված անձնանունները (այն է՝ «Ուրարտացի», իբրև անձնանուն) չեն հաշվվում) ուրարտական (խուռի-ուրարտական) անուններ են կրում նրանց շուրջ 65.23 տոկոսը (15 անձ 23-ից), 3-ը կրում են սեմական անուն (13.04 տոկոս), մեկը, հավանաբար, իրանական (4.34 տոկոս), ևս 4-ի անունների ծագումն անհայտ է (17.4 տոկոս):

Ուրարտական թագավորության և Ասորեստանի միջև ձգվող արևելատավրոսյան լեռների գոտում ընկած փոքր թագավորությունների (Շուբրիա, Կումմե, Ուկկու, Մուծածիր, ևն) 49 բնակիչների 37 անձնանուն է վկայված նորասորեստանյան և ուրարտական աղբյուրներում: Այստեղ նկատելի է սեմական անունների թվի կտրուկ աճը, հատկապես՝ Շուբրիայում (անձնանունների շուրջ մեկ երրորդը) և Կումմեում (շուրջ մեկ քառորդը), ինչը բացատրելի է սեմական աշխարհի անմիջական հարևանությամբ և Ասորեստանի հետ այդ երկրների ունեցած սերտ կապերով: Ընդհանուր առմամբ՝ սեմական անունների քանակն այս գոտում կազմում է մոտ 21.88 տոկոս (7 անուն: 2 անընթեռնելի և էթնիկական հիմքով կազմված 15 անուն չեն հաշվարկվում): Խուռի-ուրարտական անունների թիվը հասնում է 11-ի (34.37 տոկոս): Հակառակ սպասվածի՝ եզակի են իրանական անունները (3 անուն, 9.38 տոկոս, ընդ որում, ստուգաբանությունները վիճելի են): Անհայտ ծագման անունների թիվն այստեղ հասնում է 11-ի (34.37 տոկոս):

Հատկանշական է, որ, թե՛ ուրարտական, թե՛ նորասորեստանյան աղբյուրները ըստ էության ուրվագծում են նույնատիպ պատկեր: Հիմնական տարբերությունը կայանում է սեմական անունների գրեթե եռակի աճի մեջ՝ լեռնաշխարհի հարավային, կոնտակտային գոտում: Փոխարենը՝ մեծ է հնդ-եվրոպական անունների թիվը լեռնաշխարհի ներսում և հատկապես՝ նրա հյուսիս, հյուսիս-արևելյան հատվածում (Էթիունի): Մասնավորապես, հայերենով է ստուգաբանվում էթիունյան համադաշնությանը մաս կազմած երկրների առաջնորդների մեծ մասի անունները, ինչը վկայում է հայերենի՝ իբրև խոսակցական լեզու լեռնաշխարհի այս գոտում գերիշխելու մասին:

Ինչ վերաբերում է նորասորեստանյան աղբյուրներում հիշատակված ուրարտացիների շարքում ուրարտերենով (խուռի-ուրարտերենով) ստուգաբանվող անձնանունների բարձր տոկոսին (65.23), ապա դա, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր այն փաստով, որ աղբյուրներում հիշատակված անձինք սովորաբար ներկայացրել են ուրարտական տերության իշխող խավը և արքայատան անդամներին, հիմնականում՝ բարձրաստիճան զորավարներ և մարզպետներ:

Այսպիսով, ձեռք բերված արդյունքները վկայում են Ուրարտուի բազմէթնիկ բնույթը և ինչպես լեռնաշխարհի, այնպես էլ՝ ուրարտական թագավորության ներսում խոսակցական տարբեր լեզուների գոյությունը: Ուրարտական իշխանությունները լայնածավալ վերաբնակեցումների իրենց քաղաքականությամբ և շուրջ մեկ միլիոն մարդու վերաբնակեցմամբ, որոնց զգալի մասն ուներ «Էթիունյան» ծագում, կամա թե ակամա նպաստել են թագավորության ներսում լեռնաշխարհի այլ լեզուների, բայց հատկապես՝ հայերենի տարածմանը: Ըստ հույն աշխարհագրագետ Ստրաբոնի (II.14.5)՝ Ք.ա. 2-րդ դ-ի սկզբներին լեռնաշխարհն այլևս միալեզու (հայալեզու) էր: